# ՍՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԱՆԽԱԽՏ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ

Պրոֆ. Ա. Վ. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

*ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամությունը ծնվել և ամրապնդվել է Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության բոցերի մեջ, օտարերկրյա ինտերվենցիայի և քաղաքացիական կռիվների մարտերում կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ։*

*Ցարիզմի և բուրժուազիայի դեմ մղված դասակարգային պայքարում Պետրոգրադի, Մոսկվայի, Կիևի, Օդեսայի, Բաքվի, Թիֆլիսի, Երևանի, Մինսկի, Տաշքենդի, Ռիգայի և այլ արդյունաբերական շրջանների բանվորները միասնական էին և համերաշխ։ Ռուսաստանի բոլոր ժողովուրդների բարեկամության և համերաշխության, պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշի շուրջը նրանց համախմբելու գործում մեծ է ռուս բանվոր դասակարգի դերը։*

*Լենինյան ազգային քաղաքականության շնորհիվ ոչ ռուս ժողովուրդները համախմբվեցին ռուս ժողովրդի շուրջը, որով և սովետական իշխանությունը ստացավ նրանց օժանդակությունն ու համակրանքն ինչպես հեղափոխության, այնպես էլ օտարերկրյա ռազմական ինտերվենցիայի և քաղաքացիական կռիվների ժամանակ։ Վ. Ի. Լենինը բազմիցս մատնանշել է Ռուսաստանի բոլոր ժողովուրդների դասակարգային համագործակցության և միասնության խոշոր նշանակությունը հեղափոխության հաղթանակի և ամրապնդման գործում։*

*Երիտասարդ սովետական հանրապետության ինքնուրույնությունն ու ազատությունը պաշտպանելու համար կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ոտքի կանգնեցին ուկրաինացի, բելոռուս, լատիշ, էստոնացի, հայ, վրացի և այլ ազգերի բանվորները և աշխատավորները։ Իմպերիալիստական տերությունների և ներքին հակահեղափոխական զինված ուժերի ռազմական հարձակման պայմաններում ստեղծվեց սովետական ժողովուրդների ռազմա-քաղաքական դաշինք, որն ավելի ուշ լրացվեց միասնական տնտեսական և դիվանագիտական դաշինքի ստեղծումով։*

*Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից անմիջապես հետո սովետական իշխանությունը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ հռչակեց Ռուսաստանի բոլոր ժողովուրդների ինքնորոշման իրավունքը, ընդհուպ մինչև պետական անջատումը։ Հասկանալի է, առանց անջատման իրավունքի ճանաչման ազգերի և ազգությունների միավորումը չէր կարող ազատ լինել։ «Մենք,— գրել է Վ. Ի. Լենինը,— ուզում ենք ազատ միացում և այդ պատճառով էլ պարտավոր ենք ճանաչել անջատման ազատությունը»[1]։ Վ. Ի. Լենինի այդ խոսքերը մարգարեական էին. սովետական ժողովուրդների անջատման իրավունքի գործնական իրականացման վերջնական արդյունքը ոչ*

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 26, էջ 207։

թե նրանց անջատումն էր, այլ նրանց հետագա մերձեցումը, միացումը՝ իրավահավասարության և կամավորության հիմքի վրա։ «Մենք,— գրել է Վ. Ի. Լենինը,— ուզում ենք հեղափոխական-պրոլետարական միասնություն, միացում և ոչ թե անջատում»[2]։

Մշակելով ազատ ու հավասար ժողովուրդների սերտ միության և մեծ պետության կառուցման մասին իր ուսմունքը, Վ. Ի. Լենինը ելնում էր սոցիալիզմի համաշխարհային շահերից։ «Մենք,— գրել է նա,— ցանկանում ենք որքան կարելի է ավելի սերտ միություն, որքան կարելի է ավելի մեծ թվով ազգեր, որոնք վելիկոռուսների հետ հարևան են, մենք այդ ուզում ենք հօգուտ դեմոկրատիայի և սոցիալիզմի, հօգուտ այն բանի, որ ինչքան կարելի է տարբեր ազգերի ավելի մեծ թվով աշխատավորներ ներգրավվեն պրոլետարիատի պայքարին»[3]։

Սովետական ֆեդերացիայի, այնուհետև ՍՍՀՄ ստեղծման և ամրապնդման գործում խոշոր դեր խաղացին մեր երկրի բոլոր ազգերն ու ազգությունները և առաջին հերթին ռուս մեծ ժողովուրդը։ 1918 թ. հունվարին իր կազմով բազմազգ Ռուսաստանի հանրապետությունը դարձավ ֆեդերատիվ միություն։ 1919—1920 թթ. ստեղծվեցին Բաշկիրիայի, Կարելիայի, Թաթարական, Մարիական, Ուդմուրտական և այլ ավտոնոմ հանրապետությունները։ 1922 թ. ՌՍՖՍՀ կազմի մեջ էին մտնում 10 ավտոնոմ հանրապետություն, 11 ավտոնոմ մարզ և մի շարք շրջաններ։ Ռուս ժողովուրդը օգնեց ֆեդերացիայի մեջ կամավորապես միավորված բոլոր ժողովուրդներին, որոնցից շատերի մոտ գերակշռում էին ֆեոդալական-նահապետական հարաբերությունները։ Ֆեդերացիայի կազմում այդ ժողովուրդները, շնորհիվ կուսակցության ազգային քաղաքականության, զարգացան տնտեսական ու կուլտուրական տեսակետից, հաղթահարեցին եղած դժվարությունները, իրենց ազգային, տնտեսական և կուլտուրական հետամնացությունը։ Սովետական ժողովուրդների միջև անցյալից մնացած տնտեսական և քաղաքական փաստական անհավասարության լիկվիդացման գործում մեծ դեր խաղաց ՌՍՖՍՀ, որը մեծ օգնություն ցույց տվեց նախկինում ճնշված բոլոր ժողովուրդներին։ Այսպես, Ռուսաստանը 1919 թ. Ուկրաինային բաց թողեց 1675 միլիոն ռուբլու փոխառություն, Դոնբասի արդյունաբերությունը վերականգնելու համար ուղարկվեցին որակյալ տեխնիկական կադրեր, սարքավորումներ, ֆինանսական միջոցներ։ 1920 թ. դեկտեմբերին ՌՍՖՍՀ Ժողկոմսովետը Վ. Ի. Լենինի ստորագրությամբ որոշում ընդունեց Հայաստանին 3 միլիարդ ռուբլի վարկ բաց թողնելու մասին։ Վ. Ի. Լենինի ցուցումով ՌՍՖՍՀ պարենային ժողկոմատը Հայաստանին 1920 թ. վերջին և 1921 թ. սկզբին բաց թողեց 40 վագոն առաջին անհրաժեշտության ապրանքներ, 12 վագոն դեղորայք, 325 հազար փութ հացահատիկ, 7 վագոն բրինձ, 5 հազար փութ շաքար, 1500 գլուխ անասուն, 36 հազար զույգ սպիտակեղեն, ավելի քան 1.200 հազար փութ նավթ և բենզին[4]։

1921 թ. սկզբին Ադրբեջանական ՍՍՀ Ռուսաստանից որպես օգնություն ստանում է ավելի քան 2,5 միլիոն փութ հաց։ ՌՍՖՍՀ կառավարությունը, անձամբ Վ. Ի. Լենինը լուրջ ուշադրություն էին դարձնում Ադրբեջանի նավթար-

---

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում։

4 Տե՛ս «История СССР», т. VII, М., 1967, էջ 650։

դյունաբերության վերականգնման և բամբակագործության զարգացման գործին։ Սովետական Ռուսաստանը Ադրբեջանին տվել է 800 հազար ռուբլի ոսկով՝ Մուղանի անապատի իռիգացիոն սիստեմի վերականգնման համար, Բաքու ուղարկեց 600 հազար փութ հաց, որի կարիքը խիստ զգացվում էր, Թուրքեստանի Ավտոնոմ Հանրապետությանը բաց թողեց 2 միլիոն փութ հացահատիկ, Թաթարական Ավտոնոմ Հանրապետությանը՝ 8,3 միլիոն փութ սերմացու, հացահատիկ, 1 միլիոն փութ կարտոֆիլ[5], Վրաստան ուղարկեց մահուդի ֆաբրիկա, արդյունաբերական սարքավորումներ, գյուղատնտեսական գործիքներ, պարենային միջոցներ և այլն։ Իրենց հերթին սոցիալիստական հանրապետությունները օգնություն էին ցույց տալիս Ռուսաստանյան ֆեդերացիային։ Այսպես օրինակ, 1920 թ. մայիսին Դոնբասի բանվորները Մոսկվա և Պետրոգրադ են ուղարկում մի քանի էշելոն ածուխ, աղ, ապակի։ Ուկրաինայից ուղարկվում է հաց, Բաքվից ուղարկվում են 160 միլիոն փութ նավթ և նավթային ապրանքներ[6]։

Կուսակցության լենինյան ազգային քաղաքականության շնորհիվ սովետական բոլոր ազգերի և ազգությունների միջև ստեղծվեցին բարեկամական անկեղծ հարաբերություններ տնտեսական, քաղաքական և կուլտուրական կյանքի բոլոր բնագավառներում։

ՌՍՖՍՀ ստեղծումը լավագույն օրինակ էր Անդրկովկասի հանրապետությունների ժողովուրդների միավորման համար։ 1922 թ. Անդրկովկասի երեք սովետական, իրավահավասար սովետական հանրապետությունների կամավոր համաձայնությամբ կյանքի կոչվեց Անդրֆեդերացիան, որը հաջողությամբ գործեց շուրջ 14 տարի։ Այն մեծ դեր խաղաց Անդրկովկասի աշխատավորների միջև ազգային խաղաղություն հաստատելու, նրանց տնտեսական, քաղաքական, կուլտուրական համագործակցության, երկրամասի էկոնոմիկայի և կուլտուրայի զարգացման գործում։

Սովետական բոլոր անկախ հանրապետությունների հարաբերությունները ՌՍՖՍՀ հետ կառուցվում էին միութենական պայմանագրերի և տնտեսական հատուկ համաձայնագրերի հիման վրա։ 1920—1921 թթ. ՌՍՖՍՀ և Ուկրաինայի, Բելոռուսիայի, Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի, ինչպես նաև Խորեզմի և Բուխարայի սովետական հանրապետությունների միջև կնքվեցին միութենական պայմանագրեր։ Սովետական բոլոր ժողովուրդների միջև ստեղծվեցին ռազմա-քաղաքական, դիվանագիտական և տնտեսական հարաբերություններ։ Կնքված պայմանագրերը նախատեսում էին պայմանավորվող հանրապետությունների անկախություն, սուվերենություն, իրավահավասարություն, ազգային և ինտերնացիոնալ շահերի պաշտպանություն։ Այդ պայմանագրերը ժամանակին օրինակելի կերպով ծառայեցին սոցիալիզմի շինարարությանը, ամրապնդեցին սովետական պետությունը տնտեսապես և ռազմական տեսակետից։

1918—1920 թթ. ազգային պետական շինարարության կառուցվածքի փորձը զգալիորեն արագացրեց Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմավորման պրոցեսը, որի համար ստեղծվել էին օբյեկտիվ պայմաններ և նախադրյալներ։ Այդպիսի պետության կազմավորման

5 Նույն տեղում։
6 Նույն տեղում։

օբյեկտիվ անհրաժեշտությունը Վ. Ի. Լենինը մասնավորապես նշել է 1920 թ. հունիսին գրած իր «Ազգային և գաղութային հարցերի վերաբերյալ թեզիսների սկզբնական ուրվագիծ» աշխատության մեջ։ «Ճանաչելով ֆեդերացիան որպես անցման ձև դեպի լիակատար միասնություն,— գրել է Վ. Ի. Լենինը,— անհրաժեշտ է ձգտել ավելի ու ավելի սերտ ֆեդերատիվ միության, նկատի ունենալով առաջին՝ ամբողջ աշխարհի ռազմական տեսակետից անհամեմատ ավելի զորեղ իմպերիալիստական պետություններով շրջապատված սովետական հանրապետությունների գոյությունը պաշտպանելու անհնարինությունն առանց սովետական հանրապետությունների ամենասերտ դաշինքի. երկրորդ՝ սովետական հանրապետությունների տնտեսական սերտ դաշինքի անհրաժեշտությունը, առանց որի անիրագործելի է իմպերիալիզմի կողմից ավերված արտադրողական ուժերի վերականգնումը և աշխատավորների բարեկեցության ապահովումը. երրորդ՝ միասնական մի ընդհանուր պլանով բոլոր ազգերի պրոլետարիատի կողմից կարգավորվող համաշխարհային տնտեսության որպես ամբողջության ստեղծման տենդենցը...»[7]։

ՌԿ(բ)Կ X համագումարը, ելնելով լենինյան ցուցումներից, առաջ քաշեց և հիմնավորեց սովետական հանրապետությունների կամավոր միավորման և մեկ միասնական պետություն ստեղծելու հարցը. «Ընդհանուր տնտեսական, քաղաքական և պաշտպանական շահերը,— ասված է համագումարի բանաձևում,— թելադրում են առանձին սովետական հանրապետություններին կամավորապես միավորվել մեկ միասնական խոշոր պետության կազմի մեջ»[8]։

Սովետական Միության կազմավորման պատմությունը անցել է երեք հիմնական փուլ։ Առաջին փուլը ընդգրկում էր քաղաքացիական կռիվների և օտարերկրյա ռազմական ինտերվենցիայի շրջանը (1918—1920 թթ.)։ Այդ ժամանակաշրջանում սովետական հանրապետությունների համագործակցությունն իրականացվում է ռազմա-քաղաքական դաշինքի ձևով. այն արտահայտվեց մեկ միասնական քաղաքական և ռազմական ղեկավարության ստեղծմամբ, միասնական բազմազգ կարմիր բանակով, տնտեսական ռեսուրսների միավորումով՝ հակահեղափոխության և համաշխարհային իմպերիալիզմի դեմ պայքարելու համար։ Երկրորդ փուլը ընդգրկում է 1920 թ. վերջը և 1922 թ. առաջին կեսը։ Այս շրջանում սովետական ժողովուրդների ռազմա-քաղաքական դաշինքը լրացվեց տնտեսական դաշինքով։ Սովետական միասնական պետության կազմավորման երրորդ եզրափակիչ փուլը սկսվեց 1922 թ. երկրորդ կեսին և ավարտվեց նույն թվականի դեկտեմբերի վերջին։ Այս շրջանում կուսակցությունը քաղաքական, բացատրական հսկայական աշխատանք ծավալեց աշխատավորների լայն շրջանում ՍՍՀՄ ստեղծման հարցի շուրջը։

ՌԿ(բ)Կ քաղբյուրոյի որոշմամբ սովետական հանրապետությունների միավորման ձևերը որոշելու համար 1922 թ. օգոստոսին ստեղծվեց հատուկ հանձնաժողով Ի. Վ. Ստալինի գլխավորությամբ։ Հանձնաժողովը առաջարկեց և պաշտպանեց «ավտոնոմիզացիայի» գաղափարը, ըստ որի սովետական բոլոր հանրապետությունները պետք է մտնեին ՌՍՖՍՀ մեջ ավտոնոմիայի իրավունքներով։ Վ. Ի. Լենինը խիստ քննադատության ենթարկեց այդ առաջարկը, նշելով, որ այս հարցում «ճակատագրական դեր են խաղացել Ստալինի շտապո-

7 Վ. Ի. Լենին, Ընտիր երկեր, հատ. 3, 1964, էջ 492։

8 «ՍՄԿՊ-ն բանաձևերում»,... մաս 1-ին, էջ 711—712։

զականությունն ու ադմինիստրատորական հրապուրանքը»[9]։ Վ. Ի. Լենինը խիստ քննադատեց նաև Ուկրաինայի այն գործիչներին, որոնք հանդես էին գալիս ֆեդերալ միություն ստեղծելու դեմ և առաջարկում էին հանրապետությունները միավորել կոնֆեդերացիայի հիմքի վրա, այսինքն՝ ստեղծել այնպիսի միավորում, որտեղ չէր լինի ժողովրդական տնտեսության զարգացման ընդհանուր պլան, միասնական միութենական բյուջե, միասնական դիվանագիտություն, միութենական քաղաքացիություն, միասնական արտաքին առևտուր։ Մերժվեցին վրացական, թաթարական, բաշկիրական, ադրբեջանական նացիոնալ-ուկլոնիստների կարծիքները։ Մերժելով և դատապարտելով բոլոր սխալ, վտանգավոր տեսակետներն ու գաղափարները, ՌԿ(բ)Կ Կենտկոմը նշեց միութենական պետության ստեղծման միակ ճիշտ գիծը։ «Մենք,— նշում էր Վ. Ի. Լենինը,— մեզ իրավահավասար ենք ճանաչում Ուկրաինական ՍՍՀ-ի և մյուսների հետ մեկտեղ ու նրանց հետ համահավասար մտնում ենք նոր միության, նոր ֆեդերացիայի մեջ»[10]։

ՌԿ(բ)Կ Կենտկոմի հոկտեմբերյան պլենումում (1922 թ.) ընդունվեց Վ. Ի. Լենինի առաջարկությունը՝ ստեղծել Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միություն, որի իրավահավասար անդամները կլինեն ինչպես սովետական բոլոր հանրապետությունները, այնպես էլ Ռուսաստանյան ֆեդերացիան։ ՌԿ(բ)Կ Կենտկոմի հոկտեմբերյան պլենումի որոշումը հավանություն գտավ բոլոր հանրապետությունների կենտրոնական կոմիտեների, ինչպես նաև աշխատավորների կողմից։ 1922 թ. հոկտեմբերի 16-ին գումարված Ուկրաինայի կոմունիստական կուսակցության Կենտկոմի պլենումը հավանություն է տալիս ՍՍՀ Միություն ստեղծելու մասին ՌԿ(բ)Կ Կենտկոմի հոկտեմբերյան պլենումի որոշմանը։ Այդ նույն օրը հրավիրված համաուկրաինական Կենտգործկոմի III սեսիան հանձնարարում է ՈՒՍՍՀ Ժողկոմսովետին՝ բանակցություններ վարել մյուս հանրապետությունների կառավարությունների հետ՝ ՍՍՀ Միության օրենսդրական ու գործադիր օրգանների ձևավորման համար։ Նույն թվականի դեկտեմբերի 10-ին բացվեց Սովետների VII համաուկրաինական համագումարը, որտեղ ՍՍՀ Միության մեջ սովետական հանրապետությունների միավորման մասին զեկուցումով հանդես եկավ Մ. Վ. Ֆրունզեն։ Համագումարը արտահայտվեց ՍՍՀՄ ստեղծելու օգտին, ընդունեց դեկլարացիա և որոշում՝ Ուկրաինական ՍՍՀ սահմանադրության հիմունքների մասին։ Բելոռուսիայի և Անդրկովկասի աշխատավորները նույնպես մեծ ոգևորությամբ ընդունեցին ՍՍՀՄ ստեղծելու լենինյան գաղափարը և հավանություն տվեցին ՌԿ(բ)Կ Կենտկոմի հոկտեմբերյան պլենումի որոշմանը։ Բանվորների և ծառայողների Մինսկի քաղաքային ժողովը լսելով զեկուցում ՍՍՀ Միության կազմավորման մասին, ողջունում է Բելոռուսիայի կոմունիստական կուսակցության Կենտկոմի նախաձեռնությունը և հավանություն է տալիս սովետական անկախ հանրապետությունների կամավոր միավորման լենինյան գաղափարին։

ՍՍՀ Միության կազմավորման լենինյան գաղափարը ջերմ ընդունելության և հավանության արժանացավ նաև Անդրկովկասում։ Անդրկովկասի աշխատավորներն իրենց միահամուռ կամքը հայտնեցին Անդրֆեդերացիայի միջոցով ՍՍՀ Միության մեջ մտնելու մասին։ Արտահայտելով Ադրբեջանի, Հա-

9 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 36, էջ 701։

10 Նույն տեղում, էջ 853։

յաստանի և Վրաստանի կոմունիստների, ինչպես նաև աշխատավորության միահամուռ ցանկությունը, 1922 թ. հոկտեմբերի 18-ին բացված Անդրերկրկոմի պլենումը հավանություն է տալիս ՌԿ(բ)Կ Կենտկոմի հոկտեմբերյան պլենումի՝ «ՍՍՀ Միության մեջ Անդրկովկասյան ֆեդերացիայի միավորման մասին» որոշմանը։

1922 թ. աշնանը Անդրկովկասի բոլոր հանրապետություններում տարվեցին լուրջ նախապատրաստական աշխատանքներ. ՍՍՀ Միության կազմավորման համար Բաքվում, Երևանում, Թիֆլիսում հրավիրվում են աշխատավորական ժողովներ, միտինգներ, կենտրոնական կոմիտեների պլենումներ, կոնֆերանսներ, խորհրդակցություններ։ Ամենուրեք կոմունիստները, աշխատավորները, ծառայողները արտահայտվում էին Անդրֆեդերացիայի միջոցով ՍՍՀ Միության մեջ միավորվելու օգտին։

Ինչպես Անդրֆեդերացիայի ստեղծման, այնպես էլ ՍՍՀ Միության մեջ Անդրկովկասյան ֆեդերացիայի միավորման գործում մեծ էր ականավոր լենինյաններ Գ. Օրջոնիկիձեի, Ս. Կիրովի, Ալ. Մյասնիկյանի, Ն. Նարիմանովի, Ս. Օրախելաշվիլու և այլոց դերը։

Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմավորման օգտին միահամուռ կերպով արտահայտվեցին ՌՍՖՍՀ և Միջին Ասիայի ժողովուրդները։ Ռուսաստանյան ֆեդերացիան բոլոր ժողովուրդների համար ձգողական կենտրոն և հզոր ուժ էր, որի աջակցության վրա էին հենվում բոլոր ազգերի աշխատավորները՝ ինչպես ներքին և արտաքին թշնամական ուժերի դեմ մղած պայքարում, այնպես էլ սոցիալիզմի և կոմունիզմի կառուցման գործում։

1922 թ. դեկտեմբերի 30-ին Մոսկվայում, Կրեմլում բացվեց սովետների Համամիութենական I համագումարը, որն արտահայտելով սովետական բոլոր հանրապետությունների աշխատավորների կամքը, ընդունեց ՍՍՀ Միություն կազմելու վերաբերյալ պատմական դեկլարացիան և պայմանագիրը։ Միութենական մեկ պետության մեջ միավորվելու համար սուվերենության, իրավահավասարության, կամավորության սկզբունքներով պայմանագիր կնքեցին՝ Ռուսաստանի Սովետական Սոցիալիստական Ֆեդերատիվ Հանրապետությունը, Ուկրաինական Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը, Բելոռուսական Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը, Անդրկովկասյան Սովետական Սոցիալիստական Ֆեդերատիվ Հանրապետությունը (որի կազմում էին Ադրբեջանը, Հայաստանը, Վրաստանը)։

Այսպիսով, ՍՍՀՄ դարձավ այն ամուր հիմքը, որի վրա բարձրացավ սովետական բոլոր ժողովուրդների լենինյան անխախտ բարեկամության և միասնության ամրոցը։ Հիրավի, պատմական ու համաշխարհային է ՍՍՀՄ ստեղծման նշանակությունը։ Այդ կապակցությամբ հատկանշական են Մ. Ի. Կալինինի հետևյալ խոսքերը, որը նա արտահայտեց Սովետների I համագումարը փակելիս. «Ամբողջ հազարամյակներ են անցել այն պահից,— ասաց նա,— երբ մարդկության լավագույն մտածողները ճիգ էին թափում մի տեսական պրոբլեմի շուրջը՝ փնտրելով այնպիսի ձևեր, որոնք ժողովուրդներին հնարավորություն տային առանց մեծագույն տանջանքների, առանց փոխադարձ պայքարի ապրել համերաշխության և եղբայրության մեջ։ Միայն հիմա, ներկայումս, այդ ուղղությամբ գործնականորեն դրվում է առաջին քարը»[11]։

[11] М. И. Калинин, Статьи и речи (1919—1935), М., 1936, էջ 95։

Սովետների I համամիութենական համագումարից հետո երկրում ծավալվեց ՍՍՀ Միության պետական ապարատի կառուցումը՝ դեկլարացիայի և պայմանագրի համաձայն։ 1924 թ. հունվարի 31-ին Սովետների II համագումարը վերջնականապես հաստատեց ՍՍՀՄ առաջին սահմանադրությունը (հիմնական օրենք)։ Այդ թվականին կազմավորվեցին Թուրքմենական և Ուզբեկական, իսկ 1929 թ.՝ Տաջիկական Սովետական Սոցիալիստական Հանրապետությունները։

1936 թ. դեկտեմբերի 5-ին ընդունվեց ՍՍՀՄ նոր Սահմանադրությունը, որի համաձայն Ղազախական և Կիրգիզական ավտոնոմ հանրապետությունները վերակազմվեցին միութենական հանրապետությունների։ Ադրբեջանական, Հայկական, Վրացական հանրապետությունները, Անդրֆեդերացիայի կազմալուծման հետևանքով, անմիջականորեն մտան ՍՍՀՄ կազմի մեջ։ Այսպիսով, ՍՍՀՄ դառնում է 11 ազատ, իրավահավասար հանրապետությունների միություն, որին 1940 թ. կամավոր կերպով միացան Լիտվական, Լատվիական, Էստոնական հանրապետությունները, որոնք ազատագրվել էին կապիտալի տիրապետությունից սովետական բանակի եղբայրական օգնությամբ։ Մոլդավական ժողովրդի միավորման շնորհիվ Մոլդավիայի Ավտոնոմ Հանրապետությունը նույնպես վերակազմվեց միութենական հանրապետության։

1941 թ. հունիսի 22-ին ֆաշիստական Գերմանիան ուխտադրժորեն հարձակվեց ՍՍՀՄ վրա։ Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ սովետական բազմազգ ժողովուրդները ոտքի կանգնեցին և զենքի դիմեցին թշնամուն ջախջախելու համար։ Պատերազմում սովետական ժողովուրդները էլ ավելի համախմբվեցին և կազմեցին մեկ միասնական ճակատ ընդդեմ ֆաշիզմի, ավելի ամրապնդվեց բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության դաշինքը։ ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամությունը դարձավ ավելի անխախտ, որը և հանդիսացավ Սովետական Միության տարած հաղթանակի հիմնական պայմաններից մեկը։

ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամությունը և միասնությունը փայլուն կերպով դրսևորվեցին նաև հետպատերազմյան տարիներին՝ սոցիալիզմի լիակատար կառուցումն ավարտելու, կոմունիստական շինարարության վիթխարի խնդիրները լուծելու գործում։ Անցած 50 տարիների ընթացքում ՍՍՀՄ եղբայրական ժողովուրդները հանդես են գալիս միջազգային աշխատավորության ավանգարդում՝ իմպերիալիզմի և գաղութատիրության դեմ մղված պայքարում, աշխարհում կայուն, տևական խաղաղություն հաստատելու համար։

Կուսակցության և կառավարության առաջադրանքների կատարման համար սովետական բոլոր ժողովուրդները միասնական են և համերաշխ, ավելի ու ավելի են ամրապնդվում նրանց ինտերնացիոնալ կապերը և եղբայրությունը։ «Համաշխարհային պատմությունը,— ասված է ՍՄԿԿ Կենտկոմի որոշման մեջ,— տասնյակ ազգերի ու ազգությունների փոխհարաբերությունների մեջ դեռ երբեք չէր տեսել շահերի ու նպատակների, կամքի ու գործողությունների այդքան անխախտ միասնություն, այդպիսի հոգեհարազատություն, վստահություն և փոխադարձ հոգածություն, որպիսիք մշտապես արտահայտվում են մեր եղբայրական Միության մեջ»։